աւուրս պատերազմեալ ոչինչ կարացին առնել, զի էր այն անմատչելի և անառիկ։

Արդէն Կապուտից աւելի անմատչելի Պատուռայ բերդն է, եթէ հնար լինի մատչելի դառնալ, եւեն կար Թէքքէ—Բինէն, ուստի կարող էր բոլորովին անմատչելի այս բնական բերդին վերայ ապաստան դտնել։

«Գտեալ զայն իբրև անտէր և անպահապան» խօսքից կերևի որ բազմաթիւ անձնաւորութիւնք խոյս տուած և պահուած էին, որոց պահուելու համար ընդարձակ վայր մի պէտք պիտի լինէր. նաև արդէն Բագրեւանդ Ճանապարհի վերայ լինելուն ուստի Հայաստան պիտի մտնէր Պերուժան Բագրեւանդայ համար ևս մի խուլ անկիւն և մօտ անառիկ վայր։ Որպէս ժողովրդեան համար անառիկ վայր մի պատսպարել պէտք էր, ևս առաւել թագուհւոյ համար պէտք էր, և այսպիսի վայր մի ևս ցարդ չեմ լսած ընդհ. Հայաստանի մէջ։

Գերսի կողմերն գտնուած աննշան բերդորայք պարսպապատ են, մեծ զօրութիւններ կարելի էր մերձենալ և աւերել, «Պաշարեցին զայն բազում աւուրս պատերազմեալ ոչինչ կարացին առնել» խօսքով ևս կը հաստատուի թէ Պատուռայ բերդն է և կամ անհպելի Թէքքէ-Բինէն։

«Իսկ բնակիչք բերդիս իբրև տեսին թէ ոչ գոյ յոյս ինչ ի Պապայ առ որ գրեալ էր Թագուհին, բացին զդուռն ամրոցին և անձնատուր եղեն պարսից։ Յայնժամ Պերուժան և Վահան յաւարի առեալ զքաղաքն դերեցին զամենեսին, որք ի նմա ևս և զդժխոյն Փառանձեմ, և տարեալ զնոսա յԱսորեստան, ի ցից սայլից հանին զամենեսին . . . : «Իսկ Պուշեղ փախուցեալ գնաց ի Կ. Պոլիս և պատմեաց զամենայն Մեծին Ներսիսի»։